

Պօնի Համալսարանին վկայուած (1887-88): Պոլսի մէջ հրատարակած է Եկեղեցի Հայաստանեայց կրօնաթերթը. կրօնուսոյց Ս. Յակոբի Ժառ. Վարժ.ի 1888-1892ին, միեւնոյն ժամանակ հրատարակած է Ս. Յակոբի վանքի Օրացոյցին երկու տարուան յաւելուածները՝ Խորհուրդ Ս. Պատարագի և Նախարարական Եկեղեցոյ խորագրով, ինչպէս նաեւ Թագէտս վրդ. Աստուածաբեանի Հաւաքարքառ Հին եւ Նոր Կտակարանաց գրքին յառաջաբանը՝ Տեսութիւն ի վերայ Հաւաքարքառին Ս. Գրոց անուամբ: Թէոզորոս քհ. կը ձեռնադրուի ի Ս. Էջմիածին 1895ին և հոգևոր հովիւ կը կարգուի Մանչէսթրիի Եկեղեցիին, ուր կը հաստատէ տպարան եւ 1899 ին կը շարունակէ իր Եկեղեցի Հայաստանեայց կրօնաթերթը. 1899ին կը հրատարակէ Հովուական Թուղթ մը և 1904էն սկսեալ կը գտնուի Սինկլըր (Քալիֆօրնիա):

ԹՈՎՄԱ ԱԲ. — Մբ. Տիգրանակերտի Ս. Կիրակոս Եկեղեցիին մէջ կը գտնուի ձեռ. Խորհրդատեսր մը Թովմա ար. էն. ընդօրինակած Ս. Յարութեան վերնատան մէջ 1677ին. նոյնին յիշատակարանն է հետեւելը, « Գրեալ յերուսաղէմ ի Ս. Յարութեան վերնատունն, թվ. ՌՃԻՁ, ի վայելումն Ամասիացի Սահակ պարոնտէրին, ձեռամբ Թովմայ լերկ և լրիկ... արեղայի... յիշեցէք Վարդ... Նարբէկի... Մանանայ... Լուսիսաթուն... Շիրին... Հիրիքէ...»: (Թորոս Աղբար, Բ. էջ 453-454):

ԹՈՎՄԱ ԱԲ. — Մբ. ՏԲ. 1693-94ին, ՏՀ. 1695 ին, կը յիշատակուի Ամգեցի Մինաս Պարք.ի Օրագրութեան մէջ:

ԹՈՎՄԱ ԱԲ. ՀՈՌՄԿԼԱՅԵՑԻ. — Թուղթ Ներսիսի Շնորհարոյ ձեռագրին յիշատակարանին համաձայն իր հայրն է Յովհաննէս, հօրեղբայրները՝ Գրիգորիս, Գրիգոր, Զօրայար, Պեսրոս, Մանուկ և Կոստանիկ, որոնք նահատակուած են: Իր հօրաքրոջ աղջիկն ու հոգևոր մայրը՝ Մարիամթագ, իր մանկութեան սնուցիչը եղած է (ՄՁ. թ. 641): 1502 ին ընդօրինակուած և 1825 ին տպագրուած Ընդհանրակական յառաջաբանին մէջ կը յիշատակուի Թովմա ար. Հոռմկլայեցին՝ որ Հոռմկլայի դղեկին 1292 ի գրաւումէն առաջ՝ ուխտաւորութեամբ այցելած է Ս. Երուսաղէմ. իր խօսքերն են ասոնք. «... նաև նախ քան զտասն ամ գրութեան տառիս (1302 ին) գերեալ եղև ի տաճկաց հայրապետական ասթուն Հոռմկլայ՝ յորմէ և եմ ես նուաստս Թովմաս արեղայս՝